

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-4/25-I/IRPHE

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սադյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Տիգրան Վանիկի Զաքարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 235 902 800 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.3.1 բացառել Ծրագրի ֆինանսավորման ծավալը նվազելու պատճառաբանությամբ արդյունավետ աշխատող գիտական աշխատողների աշխատանքային պայմանների վատթարացումը,
- 2.4.3.2 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից, անհրաժեշտության դեպքում, հատկացնել միայն անձնակազմ տեղափոխող ավտոբուսի (միկրոավտոբուսի) մեկ վարորդի աշխատավարձ և մեքենայի հետ կապված ծախսեր, այդ թվում՝ սպասարկման և վառելիքի ծախսերը,
- 2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,
- 2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած

տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 235 902 800 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:
- 5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա


ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24

Հ/հ՝ 900011024115

ՀՎՀՀ՝ 00005673

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան



Աշոտ Սերոբի Սարգսյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի
ինստիտուտ» ՊՈԱԿ


ք.Աշտարակ, Ալիխանյան եղբ. 1

Հ/հ՝ 900448000407

ՀՎՀՀ՝ 05001265

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն՝



Տիգրան Վահրամյան Չաքարյան

Չաքարյան Տիգրան Վահրամյան

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-4/25-I/IRPHE պայմանագրի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սադյանը և Կազմակերպության տնօրեն Տիգրան Վանիկի Զաքարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-4/25-I/IRPHE պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 235 902 800 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ

(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սադյան



Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)


Տիգրան Վանիկի Զաքարյան



ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի


Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	12
Այլ պարբերականում հրապարակում՝	8
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	10

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Տիգրան Վանիկի Զարաթյան

/ Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Ներսեսյան Սուրեն Ռուբենի




ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	207 702 800	41 540 560	51 925 700	51 925 700	62 310 840
2.	տնտեսական ծախսեր՝	23 000 000	4 600 000	5 750 000	5 750 000	6 900 000
3.	այլ ծախսեր՝	5 200 000	1 040 000	1 300 000	1 300 000	1 560 000
Ընդամենը՝		235 902 800	47 180 560	58 975 700	58 975 700	70 770 840

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Տիգրան Վանիկի Զաքարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Նվարդ Ժիրայրի Զոռյան



Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-4/25-Ն/ԻՐՔԷ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	23 000 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	10 500 000
2.	գազի ծառայություն	7 500 000
3.	ջրամատակարարման ծառայություն	1 000 000
4.	կապի ծառայություն	1 000 000
5.	աղբահանություն	200 000
6.	տրանսպորտային վառելիք	2 800 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	5 200 000
1.	նյութեր	950 000
2.	սարք և սարքավորումներ	3 050 000
3.	գործուղումներ	200 000
4.	այլ ծախսեր (էներգետիկ համակարգի և շինությունների ընթացիկ նորոգում, մեքենաների տեխգնում և տեխսպասարկում, մեքենաների գույքահարկ, բնապահպանություն, ապահովագրություն, վարչական անձնակազմի սեմինարների մասնակցություն, չափագիտական ծառայություններ, էլեկտրոնային ստորագրության ծառայություն, կաթսայատան անվտանգության սուզում, ՀՇ սպասարկում, տպիչների սպասարկում, գույքի գնահատում)	1 000 000

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Տղարան Կանիկի Ջաքարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

Նվառո ժիրայրի Զորյան



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
B - ամիսների քանակ E - գումարային
C - աշխատաժամանակի ռեժիմ

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Զաքարյան Տիգրան Վանիկի	Տնօրեն	470 000	12	հիմնական	40	5 640 000
Ներսեսյան Սուրեն Ռուբենի	գիտական քարտուղար	310 000	12	հիմնական	40	3 720 000
Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի	Տնօրենի խորհրդական	180 000	12	համատեղություն	15	2 160 000
Ասմարյան Էմիլ Արշակի	Փոխտնօրեն գիտական հարցերով	400 000	12	հիմնական	40	4 800 000
Վարդանյան Վահան Հրանտի	Փոխտնօրեն ընդհանուր հարցերով	350 000	12	հիմնական	40	4 200 000
Զորյան Նվարդ Ժիրայրի	Գլխ. հաշվապահ	280 000	12	հիմնական	40	3 360 000
Պետրոսյան Մագդա Գրիգորի	Ավ. հաշվապահ	270 000	12	հիմնական	40	3 240 000
Բաբայան Գայանե Գրիգորիի	Ավ. Հաշվապահ	130 000	12	հիմնական	40	1 560 000
Ազիզյան Հասմիկ Ռուբիկի	Հաշվապահ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Զաքարյան Սուրեն Էդուարդի	I -ին Բաժնի վարիչ	185 000	1	հիմնական	40	185 000
Գյոզալյան Բեյլա Գառնիկի	Կադ.բաժ.վարիչ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Բալասանյան Վեներա Նելսոնի	Իրավաբան	160 000	12	հիմնական	40	1 920 000
Մարտիրոսյան Մարիետա Սերգեյի	Տարեկավար	95 700	12	հիմնական	40	1 148 400
Մովսիսյան Անահիտ Շավարշի	Պահեստապետ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Գրիգորյան Եվա Հայկի	Գնումների մասնագետ	104 000	3	հիմնական	40	312 000
Եղիազարյան Սուսաննա Հովհաննեսի	Տեխնիկ	95 700	3	հիմնական	40	287 100
Պետրոսյան Վահրամ Փիլոսի	Տեխնիկ	56 000	1	համատեղություն	22	56 000
Հասարթյան Անժելա Հենրիկի	Տեխնիկ	95 700	3	հիմնական	40	287 100
Ղիջյան Արթուր Ռազմիկի	Տեխնիկ	70 000	1	համատեղություն	22	70 000
Հարությունյան Վարդգես Հարություն	Տեխնիկ	95 700	3	հիմնական	40	287 100
Բախշչյան Բուրաստան Շմավոնի	Գրադ. վար.-օպերատոր	95 700	12	հիմնական	40	1 148 400
Եղիգարյան Ժորա Ֆարավոնի	Ֆրեզերագործ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Մարտիրոսյան Վալերի Միխայիլի	Ֆրեզերագործ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Կարապետյան Գնել Մկրտչի	փականագործ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Մինասյան Ֆելուշ Արշալույսի	խառատ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Միքայելյան Արմեն Անտոնի	Ֆրեզերագործ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Պետրոսյան Անդրանիկ Սոսի	խառատ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Եղիգարյան Մաքսիմ Ժորայի	Ֆրեզերագործ	104 000	12	հիմնական	40	1 248 000

Անտոնյան Մամբրէ Սերգեյի	գլխ.էներգետիկ	120 000	12	համատեղություն	28	1 440 000
Մաղաքյան Սասուն Կարապետի	էլ.մոնտյոր	110 000	12	հիմնական	40	1 320 000
Կիրակոսյան Մուշեղ Կիրակոսի	բանվոր	95 700	12	հիմնական	40	1 148 400
Գալստյան Բենյամին Վլադիմիրի	բանվոր	95 700	12	հիմնական	40	1 148 400
Ալեքսանյան Հովիկ Զավենի	էլեկտրա- գազա եռակցող	110 000	12	հիմնական	40	1 320 000
Միքայելյան Արտաշես Խաչիկի	Կաթսայատան ավագ օպերատոր	140 100	12	հիմնական	40	1 681 200
Գասպարյան Խոսրովիկ Արամի	Կաթսայատան օպերատոր	116 300	5	հիմնական	40	581 500
Սոնյան Հովհաննես Կարապետի	Կաթսայատան օպերատոր	116 300	5	հիմնական	40	581 500
Առաքելյան Արման Մնացականի	Կաթսայատան օպերատոր	124 000	5	հիմնական	40	620 000
Գալստյան Տիգրան Վանուշի	Գարաժի վարիչ	109 000	12	հիմնական	40	1 308 000
Արամյան Կարապետ Ժորայի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Նասիբյան Սուսաննա Ալյոշայի	հավաքարար	95 700	12	հիմնական	40	1 148 400
Մանուկյան Մարինե Մանուկի	հավաքարար	64 400	12	համատեղություն	28	772 800
Գևորգյան Հասմիկ Ապրեսիկի	հավաքարար	48 300	12	համատեղություն	21	579 600
Հակոբյան Գյուլնարա Ռաֆիկի	հավաքարար	48 300	12	համատեղություն	21	579 600
Պետրոսյան Հրաչիկ Սեդրակի	Պահակապետ	51 700	12	համատեղություն	23	620 400
Նահապետյան Գագիկ Բալաբեկի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Դավթյան Վազգեն Ստեփանի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Հովսեփյան Հովսեփ Ռզգոյի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Դադբաշյան Անդրանիկ Գալուստի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Բաբայան Գրիգոր Սամվելի	պահակ	117 900	12	հիմնական	40	1 414 800
Շառոյան Դերենիկ Մուշեղի	վարորդ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Բաբայան Սամվել Արամայիսի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Պետրոսյան Մխիթար Սերոբի	ատաղձագործ	103 000	12	հիմնական	40	1 236 000
Մաղաքյան Սմբաթ Սերյոժայի	պահակ	110 500	12	հիմնական	40	1 326 000
Սաքանյան Քրիստինա Գանիմաթի	քարտուղար	104 000	12	հիմնական	40	1 248 000
Աղասյան Արաքսյա Նիկոլայի	գործավար	140 000	12	հիմնական	40	1 680 000
Պետրոսյան Կարմեն Վաղարշակի	հավաքարար	64 400	12	համատեղություն	28	772 800
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա Կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիա						
Ղուլյան Ալբերտ Գարեգինի	Ավագ գիտաշխատող	343 300	12	հիմնական	40	4 119 600
Եզակյան Նարեկ Դավիթի	Կրտսեր գիտաշխատող	210 400	12	հիմնական	40	2 524 800
Սարգսյան Սուրեն Ամիրբարի	Ավագ ճարտարագետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Առաքելյան Հասմիկ Ստեփանի	Ճարտարագետ	138 300	12	հիմնական	40	1 659 600
Միրզոյան Գեղեցիկ Գուրգենի	Ճարտարագետ	138 300	12	հիմնական	40	1 659 600
Լաբորատորիա ԳԲՀ համակարգերի լաբորատորիա						
Հախումյան Արսեն Ալեքսանդրի	Առաջատար գիտաշխատող	500 100	12	հիմնական	40	6 001 200
Խաչատրյան Ռոբերտ Ժորայի	Գիտաշխատող	275 900	12	հիմնական	40	3 310 800
	Ավագ ճարտարագետ			հիմնական		

Մադոսյան Լևոն Վարշամի		179 300	12		40	2 151 600
Մելիքյան Ռազմիկ Լյուդվիգի	Ավագ ճարտարագետ	179 300	12	հիմնական	40	2 151 600
Մարտիրոսյան Հասմիկ Վալերիի	Ավագ ճարտարագետ	179 300	12	հիմնական	40	2 151 600
Արշակյան Լիլիթ	Ճարտարագետ	138 300	12	հիմնական	40	1 659 600
Մովսեսյան Լարիսա Շավարշի	Ավագ լաբորանտ	179 300	12	հիմնական	40	2 151 600
Խումբ ԳԲՀ ուժեղարարներ						
Դադայան Կարեն Անդրանիկի	Ղեկավար	410 100	12	հիմնական	40	4 921 200
Ավետիսյան Հովսեփ Նվերի	Ավագ ճարտարագետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Դադայան Մանյա Երվանդի	Ճարտարագետ	90 000	12	համատեղություն	24	1 080 000
Խումբ ԳԲՀ չափման մեթոդներ						
Պողոսյան Նուբար Գյուլբանգի	Ղեկավար	410 100	12	հիմնական	40	4 921 200
Հայրապետյան Վլադիմիր Ռազմիկի	Ավագ ճարտարագետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Արաբաջյան Գուրգեն Լևոնի	Կրտսեր գիտաշխատող	100 000	1	համատեղություն	15	100 000
Նիկիտին Ալեքսանդր Յուրիի	Լաբորանտ	138 300	12	հիմնական	40	1 659 600
Զաքարյան Հայկ Տիգրանի	Ճարտարագետ	100 000	12	համատեղություն	16	1 200 000
Լաբորատորիա Ազդանշանների թվային մշակման լաբորատորիա						
Զաքարյան Տիգրան Վանիկի	Ղեկավար	0	0	ներքին համատեղություն	20	0
Մարտիրոսյան Ստեփան Գեղամի	Գիտաշխատող	280 000	12	հիմնական	40	3 360 000
Կարապետյան Գագիկ Կարապետի	Ավագ ճարտարագետ	179 300	12	հիմնական	40	2 151 600
Թորիկյան Ջուլիետա Էվանոսի	Ճարտարագետ	145 000	12	հիմնական	40	1 740 000
Վարդանյան Հարութ Վաչիկի	Լաբորանտ	110 000	12	համատեղություն	24	1 320 000
Հովհաննիսյան Բաբկեն Արթուրի	Կրտսեր գիտաշխատող	115 000	1	համատեղություն	8	115 000
Մկրտչյան Արտյոմ Արմենի	Ճարտարագետ	138 300	12	հիմնական	40	1 659 600
Միրզոյան Կամո Ռաֆիկի	Ավագ ճարտարագետ	190 000	12	հիմնական	40	2 280 000
Եղիազարյան Ստյոպա Արմենի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	8	720 000
Պետրոսյան Ջուլիետա Վլադիմիրի	Ավագ ճարտարագետ	246 000	12	հիմնական	40	2 952 000
Լաբորատորիա Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի լաբորատորիա						
Պետրոսյան Ստեփան Գրիգորի	Ղեկավար	476 900	12	հիմնական	40	5 722 800
Մուսայելյան Աշոտ Սուրենի	Ավագ գիտաշխատող	343 300	12	հիմնական	40	4 119 600
Մաթևոսյան Լենրիկ Արշալույսի	Գիտաշխատող	290 000	12	հիմնական	40	3 480 000
Խաչատրյան Աշոտ Մանուկարի	Գիտաշխատող	280 000	12	հիմնական	40	3 360 000
Ներսեսյան Սուրեն Ռուբենի	Գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Պլուզյան Գայանե Վարդանի	Ավագ ճարտարագետ	179 300	12	հիմնական	40	2 151 600
Հովսեփյան Բենիկ Լալազարի	Ավագ ճարտարագետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Թոքմաջյան Աննա Սերգեյի	Ճարտարագետ	138 300	12	հիմնական	40	1 659 600
Ավետիսյան Ռուբեն Մայիսի	Ճարտարագետ	100 000	12	համատեղություն	16	1 200 000
Պետրոսյան Սամվել Ռաֆիկի	Լաբորանտ	138 300	12	հիմնական	40	1 659 600

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը

Հիմնարար և կիրառական գիտահետազոտական աշխատանքների կատարման արդյունքում նոր գիտական արդյունքների ստացում և գիտատեխնիկական մշակումների իրականացում:

3. Աշխատանքի բովանդակությունը

Բերված հիմնարար և կիրառական հետազոտությունները հանդիսանում են ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից հաստատված՝ ՌՖԷԻ-ի 2021-2025 թ.թ. հիմնարար և կիրառական հետազոտությունների ծրագրի 5-րդ փուլը հետևյալ երկու ուղղություններով:

Ուղղություն 1

Գերբարձր հաճախությունների և տեռահերցային ալիքների ճառագայթումը և ընդունումը, մետանյութերում, ֆոտոնային բյուրեղներում և պլազմայում տարածումը, դաշտերի արտապատկերման և ազդանշանների սինթեզի, զտման և արագագործ թվային մեթոդների և հանգույցների ստեղծումը: Նոր մեթոդների, տեխնիկական միջոցների և համակարգերի մշակումը ռադիոլոկացիայում, տեխնոլոգիական հսկման և դիագնոստիկայի, անվտանգության, բժշկա-կենսաբանական, սեյսմաբանական և այլ կիրառումների համար:

ԳԲՀ ռադիոֆիզիկայի արդի զարգացումները բնորոշվում են նոր արհեստական նյութերի (մետանյութերի) ձևավորմամբ, հետազոտմամբ և նոր հատկություններով օժտված սարքերի կիրառմամբ, թվային եղանակներով ԳԲՀ ազդանշանների սինթեզման, մշակման և ղեկավարման տեսական և փորձնական հետազոտություններով, զանազան նշանակության տվիչների և նրանց հիման վրա «խելացի» ցանցերի ստեղծմամբ և կիրառմամբ տարբեր քաղաքացիական և հատուկ նշանակության համակարգերում: ռադիոմետրիկ եղանակների և զանազան արտապատկերիչ սարքերի զարգացմամբ ուղղված բնական պաշարների և բնապահպանման, ինչպես նաև բժշկական և այլ խնդիրների լուծմանը: Այս գիտական ուղղությունները բնորոշ են ինստիտուտում վերջին տարիներին կատարվող, ինչպես նաև տեսանելի ապագայում կատարվելիք հիմնարար և կիրառական ռադիոֆիզիկական հետազոտությունների համար:

Ինտենսիվորեն հետազոտվում են տարբեր չափերի և բնույթի օբյեկտներում պարբերական արհեստական բյուրեղների էլեկտրադինամիկական հատկությունները ԳԲՀ ազդանշանների հաճախաբևեռացման բնութագրերի ղեկավարման և

Digitally signed by ZAKARYAN
TIGRAN 2307640072
Date: 2025.02.03 11:17:54
GMT+04:00

ալեհավաքների ուղղորդվածության բարձրացման համար:

Ուղղություն 2

Բարակադանթային կիսահաղորդչային հետերակառուցվածքների և ցածր չափայնությամբ համակարգերի (նանոլարերի, նանոկետերի) հիմնարար հետազոտությունները՝ արևային էներգիայի բարձր էֆեկտիվության փոխակերպիչների, ճառագայթիչների, դետեկտորների և այլ էլեկտրոնային սարքերի ստեղծման նպատակով: Այլ կոնդենսացված նյութերի (պինդ մարմիններում էլեկտրոնային գազերի, հեղուկներում նանոմասնիկային խառնուրդների) ուսումնասիրումը:

Միջին ինֆրակարմիր տիրույթի ֆոտոընդունիչները (ֆոտոդիոդներ, Շոտտկի դիոդներ) աշխատում են մթնոլորտի թափանցիկության տիրույթներից մեկում՝ 3-5 մկմ, և հնարավորություն են տալիս գրանցել մեծ հեռավորություններից եկող թույլ ազդանշանները, ինչը պայմանավորում է նրանց լայն կիրառությունները տարբեր համակարգերում, այդ թվում հատուկ նշանակության սարքերում: Բազմատարր և մատրիցային ֆոտոընդունիչ սարքավորումները հանդիսանում են “դիտարկող” կամ “հետևող” օպտոէլեկտրոնային համակարգերի հիմքը, ինչը իրենից ներկայացնում է ֆոտոզգայուն տարրի և միկրոէլեկտրոնային տրակտի միավորում մի սարքի մեջ: Առաջարկվող ֆոտոընդունիչները կարող են կիրառվել պասիվ հետևող, շեղումների և անկյունների գրանցող սարքերում, ինչպես նաև մթնոլորտում առկա ածխաթթու գազի գրանցման համար, որի հիմնական կլանման գիծը համապատասխանում է 426 նմ ալիքի երկարությանը և ընկած է մշակված ֆոտոընդունիչների առավել զգայնության տիրույթում:

նպատակը (նպատակները) և խնդիրները

Ուղղություն 1

- Նախատեսվում է մշակել ազդանշանների և պատկերների մշակման համար արագագործ ունեվերսալ հաշվողական հարթակ, որը հնարավոր կլինի օգտագործել տարբեր կիրառություններում՝ հեռահաղորդակցության, ռադիոլոկացիոն և պատկերների մշակման համակարգերում, արդյունաբերական պրոցեսների ավտոմատացման խնդիրներում և այլ:
- Ուսումնասիրել շարժվող օբյեկտներից անդրադարձած ռադիոլոկացիոն ազդանշանների միկրո-դոպլերային սպեկտրները և մշակել նրանց ավտոմատ նույնականացման եղանակները՝ հետազայում սպեկտրալ առանձնահատկությունների նմանության չափանիշի մշակման և տիպային սպեկտրների գրադարանի ստեղծման համար:
- Ուսումնասիրել խիտ պլազմայում, այդ թվում պլազմային փնջերում, և պինդ մարմիններում տեղի ունեցող երևույթները՝ դրանց հատկությունների կառավարման նպատակով:
- Համեմատելով հայտնի անդրադարձման արդյունարար մակերևույթի (ԱԱՄ) և որոշակի համընթաց արագությամբ շարժվող նշանակետից անդրադարձած ազդանշանի մեծությունը միևնույն արագությամբ շարժվող անհայտ (չափվող) նշանակետից անդրադարձածի հետ՝ փորձնականորեն գնահատել վերջինիս ԱԱՄ-ն:

- Ուսումնասիրել բարձր կարգի բեսելյան անտենաների ճառագայթիչների և մագնիսա-դիէլեկտրիկ տակդիրների վրա փոքրաչափ անտենաների էլեկտադինամիկական բնութագրերը՝ հեռանկարային անտենաների մշակման նպատակով:
- Ուսումնասիրել մակերևույթային անհարթությունների ազդեցությունը էլեկտրամագնիսական ալիքների կլանման վրա: Հետազոտվելու են տարբեր ալիքային տիրույթներ սկսած միկրոալիքային տիրույթից մինչև օպտիկականը:

Խնդիրները

- Հետազոտել երկրորդային ռադիոլուկացիոն ինֆորմացիայի մշակման համար կիրառվող Կալմանի գտիչների դերում բջջային ավտոմատների մոդելների օգտագործման հնարավորությունը:
- Ուսումնասիրել ճնշված կրող հաճախականությամբ երկկողային հաճախականային շերտերով (ՃԿՀԵՀԸ) ազդանշանների կիրառման հնարավորությունները ոչ գծային ռադիոհաճախային շղթաների բնութագրերի որոշման համար: Հետազոտել նաև ՃԿՀԵՀԸ ազդանշանների միջոցով ընդունիչ համակարգերում, մասնավորապես ԱԹՍ-ներում, խանգարումներ ստեղծելու հնարավորությունը:
- Նախատեսվում է հետազոտել էվկլիդեսի և Մինկովսկու սիգնատուրա ունեցող կոր տարածություններում շարժվող եռաչափ և քառաչափ համակարգեր, որոնց Լագրանժիանները կախված են հետազոտվող արտաքին կորություններից (կոշտություն, ոլորում):
- Հետազոտել անդրադարձած լույսի ամպի (haze) քանակական բնութագրերը կլանող միջավայրերում, ինչպես նաև լույսի սպին-օրբիտային փոխազդեցությունը ոչ գծային անհամասեռ միջավայրերում:
- Կատարված փորձարկումների արդյունքներից ելնելով նախկինում մշակված բիոսենսորի կատարելագործումը և վերջնական գործող նմուշի պատրաստումը:
- Հետազոտել արտաքին մագնիսական դաշտում շարժվող և պլազմայի հետ փոխազդող փնջի էլեկտրոնների պտտական շարժման ազդեցությունը դիսիպացիոն պրոցեսների վրա:
- Հաճախությունների բազմապատկման և հարմոնիկների գեներացիայի ոչ գծային պրոցեսների ուսումնասիրությունը տարածաժամանակային խախտված ինվերսիոն սիմետրիայով բյուրեղական 2D նանոկառուցվածքներում:

Ուղղություն 2

Նպատակները

- Ակնկալվում է ստանալ օպտիկական ալիքային փաթեթների երկրաչափական նկարագրության նոր եղանակ, ինչպես նաև գրաֆենային քվանտային կետերի վերաբերյալ ճշգրիտ արդյունքներ: Ակնկալվում է նաև ստանալ նոր ոչ իզոտրոպ օպտիկական պրոֆիլներ, որոնցում օպտիկական հետազոտվող փակ են:
- Ստանալ ազնիվ և գունավոր մետաղների ֆիքսված չափերով և խտությամբ նանոմասնիկներ, որոնք կարող են կիրառվել գիտության և տեխնոլոգիաների տարբեր ոլորտներում՝ կիրառման նպատակով:
- Իրականացնել նանոկառուցվածքների, բարակթաղանթային կիսահաղորդչային հետերակառուցվածքների ֆիզիկական հատկությունների հետազոտումը՝ ստացվա

արդյունքները արևային տարրերի և ինֆրակարմիր օպտոէլեկտրոնային սարքերի մշակումներում օգտագործման նպատակով:

Խնդիրները

- Նոր տիպի ճկուն երկչափ MoS_2 բյուրեղական ֆոտոզգայուն տրանզիստորները ստեղծման ռեժիմների բարելավում և նրանց հատկությունների ուսումնասիրում տարբեր մեխանիկական լարման պայմաններում:
- Ճկուն արեգակնային տարրերի և ֆոտոընդունիչների բաղադրիչ հանդիսացող CdS և ZnS բարակ շերտերի քիմիական նստեցման իրականացում:
- p - $InSb$ - n - $CdTe$ ֆոտոընդունիչների հիման վրա CO_2 գազի գրանցման գերզգայուն և խիստ ընտրողունակ տվիչի ստեղծված մակետի պարամետրերի չափում և փորձարկում, արդյունքների հիման վրա մակետի բարելավում:
- Օրգանո-մետաղական $CH_3NH_3PbI_{3-x}Cl_x$ և լրիվ անօրգանական $CsPbBr_3$ կառուցվածքով պերովսկիտային թաղանթների ստացման տեխնոլոգիական մեթոդների կատարելագործում, ստացված թաղանթների օպտիկական և կառուցվածքային հատկությունների ուսումնասիրում՝ կախված թաղանթների ստացման և ջերմային մշակման ռեժիմներից:
- Հետազոտել բյուրեղային ցանցի լիցքավորված արատների ազդեցությունը Ca_2O հետերակառուցվածքների էլեկտրաֆիզիկական հատկությունների վրա:
- Թորած ջրում նանովայրկյանային տևողության լազերային աբլյացիայի մեթոդով ստացված ազնիվ և գունավոր մետաղների նանոմասնիկների և ջրի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի փոփոխության և մոտակա դաշտերում միկրոալիքային էլեկտրոմագնիսական փոխազդեցության ուսումնասիրումը ոչ ինվազիվ միջոցով, իրական ժամանակում:

հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների համապատասխանությունը կազմակերպության գիտական և/կամ գիտակրթական ուղղություններին

Միաժամանակ, հաշվի առնելով երկրի առջև ծառացած՝ անվտանգության հետ կապված խնդիրները, հայտի մեջ ընդգրկված կիրառական հետազոտությունները որոշ չափով կընդլայնվեն դեպի անվտանգության խնդիրների լուծումը, որոնց հիման վրա մոտ ապագայում կարող են մշակվել սպառազինությունների համար նոր համակարգեր, մասնավորապես, շատ խոստումնալից «խելացի» տվիչների անլար ցանցեր:

իրականացման ժամկետները

02.01.2025 – 30.12.2025թթ.

իրականացման մեթոդները

- Դասական էլեկտրոդինամիկայի և քվանտային ֆիզիկայի մեթոդներ
- Ազդանշանների սինթեզման և մշակման ժամանակակից թվային մեթոդներ

- Ընդունիչ անտենային համակարգերի հետազոտման ռադիոաստղագիտական մեթոդներ

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նյութերի և սարք-սարքավորումների ծախսերի գումարները /950 և 3,050 հազ. դրամ/՝ նախատեսվում են միայն գիտական և կիռարական աշխատանքների համար կոմպլեկտավորող մասերի և հատուկ նյութերի ձեռքբերման համար և չեն ներառում տրանսպորտային վառելիքի ծախսերը
2. Գործուղման ծախսերը /200 հազ. դրամ/՝ նախատեսված են ՀՀ տարածքում գործուղումների համար
3. Այլ ծախսերը /1,000 հազ. դրամ/՝ նախատեսված է էներգետիկ համակարգի և շինությունների ընթացիկ նորոգում, մեքենաների տեխզննում և տեխսպասարկում, մեքենաների գույքահարկ, բնապահպանություն, ապահովագրություն, վարչական անձնակազմի սեմինարների մասնակցություն, չափագիտական ծառայություններ, էլեկտրոնային ստորագրության ծառայություն, կաթսայատան անվտանգության սուզում, ՀԾ սպասարկում, տպիչների սպասարկում, գույքի գնահատում, և չնախատեսված ծախսերի համար

Կազմակերպության
տնօրեն (ղեկավար)՝

_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«20» 01
N1-4/25-1/IRPHE
Հավելված 6
2025թ.
պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«ՀՀ ԳԱԱ ՌՖԷԻ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

Իրականացվելիք միջոցառման						
h/h	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Փուլ 1	Ծրագրով նախատեսված հետազոտությունների համար անհրաժեշտ գիտատեխնիկական ինֆորմացիայի (գրականության, նմանակների և այլ) և նրանց իրականացման մեթոդների ընտրում և մշակում	Ինֆորմացիայի ամփոփում	Խնդիրների և նրանց լուծման մեթոդների իրա-տակեցում	01.01.2025-31.03.2025	47, 180. 560
2.	Փուլ 2	Հետազոտությունների սկզբնական փուլերի կատարում, տեսական և էքսպերիմենտալ աշխատանքների ծավալում, փորձնական նմուշների նախագծում	Տեսական հետազոտություններ, էքսպերիմենտալ չափումներ	Հաշվետվություն, տեխնիկական լուծումներ	01.04.2025-30.06.2025	58, 975. 700
3.	Փուլ 3	Հետազոտությունների հիմնական ծավալների իրականացում, տեխնոլոգիական նմուշների պատրաստում	Տեսական հետազոտություններ, էքսպերիմենտալ չափումներ	Հաշվետվություն, նմուշների փորձարկում	01.07.2025-30.09.2025	58, 975. 700
4.	Փուլ 4	Արդյունքների ամփոփում, գիտական հրապարակումների պատրաստում և ներկայացում, նմուշների փորձարկումների ակտերի պատրաստում	Արդյունքների ամփոփում	-ԱԳ ունեցող պարբերականներ՝ - 12 -Այլ պարբերականներ/հոդված ժողովածուի մեջ - 8 -Գիտաժողովի նյութեր - 10 -Փորձակոնստրուկտորական փաստաթղթերի փաթեթ - 1	01.10.2025-30.12.2025	70, 770. 840
Ընդամենը						235,902.800

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, ծրագրի գիտական ղեկավար



[Handwritten signature]

Տիգրան Զաքարյան